ԿԸ ԲԱՆԱՅ ԹԵՒՆ ԻՐ...

Որդեա՛կ, որդեակ, քէ գաս բարով, ձիեռով,
«Մէրի՛կ» կանչես, ասեն՝ մեռա՛ւ կարօտով...

Թախիծն ինչո՞ւ՝ հոգիէս, կը բանայ թեւն իր կապար...
. . . . . .
Աչքդ ճամբուն, յաւէտին հողն ես հագեր, մա՛յր, ըսին,
Ու ըսպասեր, ըսպասե՛ր, զաւկիդ հետու հասակին,
Մատաղ տուին մէջ որուն, աչքդ՝ խաղա՛ղ, ա՛լ մըթնար...:

Ի՛նչ տրտմութիւն կը կախուի, կը մաղուի վար այս գիշեր...
Կը հանգի ձայնը հու տուրջ. նայուածքներուն ընդմէջէն
Կ'րսեն մեռնիլն ես ապրեր կեանքի գիրքիդ հուսկ էջէն...
Մեղմ, աչքերէս, այս գիշեր, հու տրտմութիւնդ է կախուեր...

Դեռ չըվազած լոյսն աչքիդ, իջա՞ւ պատկերն արեգդէմ,
Զաւկիդ հէքիաթ ու հետու՝ անպատմելի կարօտէն.
Մեր մայրերուն գիրն այսպէ՛ս դարեր գըրեր են արդէն...
Զըվազած լոյսն աչքէդ, հոն, իջա՞ւ պատկերն արեգդէմ...

Թախիծն ինչո՞ւ, այս գիշեր, խորունկ ու թաց կը սահի
Գերեզմանէն իմ հոգւոյն սըլաք մ'ինչպէս երազի,
Դէպի ճիրիմը այրի, իմ արցունքին ըսպասող...:

Թախիծն ինչո՞ւ, այս գիշեր, խորունկ ու թաց՝ կը սահի՛...
Հողին ճամբով, մայր, կուգայ արցունքն այս ուր, եւ զերթ ցող
Կը գտնէ սիրտը սառա՛ծ՝ զաւկին անմար կարօտով...:

ՇԷՆ-ՄԱՀ

18 Դեկտեմբեր 1943

digitised by A.R.A.R.@